




MY ARMENIA
ARTISAN
LOOKBOOK



MY ARMENIA
ARTISAN
LOOKBOOK



MY ARMENIA PROGRAM | My handmade Armenia


«ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳԻՐ | ԻՄ ԾՆՈՒԱԳՐԾ ՀԱՅԱՍՏԱՆ

My Armenia Program, a joint partnership between USAID, the Smithsonian Institution, and the people of Armenia, harnesses the power of research, documentation, and storytelling to strengthen cultural sustainability through community-based tourism development. The program supports cultural sustainability by documenting Armenia's historic and living cultural traditions, sharing this knowledge with global audiences, and supporting the development of local resources and capacity to safeguard this cultural heritage for future generations. In addition to cultural sustainability, the goal of the program is to increase visitation to the regions of Armenia, lengthening the time visitors spend in the regions which will lead to the regional economic growth.

My Handmade Armenia is one of the major initiatives of the My Armenia program, supporting the growth, and, in some cases, revitalization of craft traditions in Armenia's rural communities including wood carving, stone carving, embroidery, carpet weaving, and pottery. The initiative works with artisans and local partners to provide workshops and assistance in product design and development, marketing, costing and pricing, and technical skills—with the aim of expanding and elevating the notion of handmade craft in the market.

«Իմ Հայաստան» ծրագիրը ԱՄՆ ՄՋԳ-ի, Սմիթսոնյան Ինստիտուտի և Հայաստանի ժողովրդի միջև համատեղ գործընկերություն է, որը համախմբում է հետազոտական, փաստաթղթավորման, ինչպես նաև պատմությունների ներկայացման գործիքները՝ համայնքային տուրիզմի միջոցով մշակութային ժառանգության կայունությունն ամրապնդելու համար: Ծրագիրը հավաքագրում է Հայաստանի պատմական և կենդանի մշակութային ավանդույթների մասին տեղեկություններ, ներկայացնում այդ արժեքները համաշխարհային հանրությանը, ինչպես նաև օգնում զարգացնել մշակութային ժառանգությունը կրողների ներուժը և կարողությունները, այդ ժառանգությունն ապագա սերնդների համար պահպանելու նպատակով: Մշակութային ժառանգության պահպանմանը զուգահեռ, ծրագրի նպատակն է ավելացնել Հայաստանում մարզային զբոսաշրջության ծավալները և մարզում անցկացվող ժամանակը՝ խթանելով մարզերի տնտեսական զարգացումը:

Իմ ձեռագործ Հայաստանը «Իմ Հայաստան» ծրագրի կարևոր նախաձեռնություններից է, որը նպաստում է Հայաստանի մարզերում այնպիսի արհեստագործական ավանդույթների ճանաչմանը, իսկ որոշ դեպքերում նաև վերականգնմանը, ինչպիսիք են փայտի փորագրությունը, քարի փորագրությունը, ասեղնագործությունը, ջուլիակագործությունը և կավագործությունը: Նախաձեռնությունն, իր գործընկերների հետ միասին, աշխատում է մարզային արհեստագործների հետ՝ իրականացնելով դասընթացներ և նրանց աջակցելով ապրանքի ձևավորման, շուկայավարման, գնագոյացման, ինչպես նաև տեխնիկական հմտությունների զարգացման հարցերում: Իմ ձեռագործ Հայաստանի վերջնական նպատակն է ընդլայնել ձեռագործ արվեստի մասին պատկերացումը և բարձրացնել դրա արժեքը շուկայում:



 Carpet | Կարպետ

 Clay | Կավ

 Iron | Մետաղ

 Jewelry | Չարդ

 Needlework | Արճկամբ

 Stone | Զար

 Textile art and Accessories | Տեքստիլ և աքսեսուարներ

 Wood | Փայտ

 Workshop | Գործառնություն



ՉԱՐՂ | JEWELRY


The roots of the Armenian tradition of jewelry-making and decoration go back to the ancient times. Armenian women have always liked to wear a lot of jewelry - necklaces, earrings, rings and bracelets mostly made of silver and gold. Silver belt was an inseparable part of the look of married women as a sign of perfection. The belts were decorated with pearls and other precious or semi-precious stones.

The main motives in the Armenian jewelry-making are geometrical, animal and nature-inspired. For example, the most central and recognizable symbol in Armenian jewelry is the pomegranate, which symbolizes fertility and abundance in the Armenian mythology.

Jewelry-making remains one of the most prominent spheres of the Armenian culture, and its tradition is carried on by numerous remarkable artisans around Armenia.

Հայկական զարդարվեստի ավանդույթները սկիզբ են առնում հնագույն ժամանակներից: Հայ կանայք միշտ սիրել են ոսկյա և արծաթյա զարդեր կրել՝ վզնոցներ, ականջօղեր, մատանիներ և ապարանջաններ: Արծաթյա գոտին, որպես կատարելության նշան, ամուսնացած կնոջ հագուկապի անբաժանելի մասն է եղել: Գոտիները զարդարված են եղել մարգարիտներով և այլ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով: Հայկական զարդարվեստում իշխող են երկրաչափական, կենդանական ու բուսական նախշերը: Օրինակ՝ ամենատարածված և ճանաչելի խորհրդանիշը նուռն է, ինչը հայկական առասպելաբանության մեջ առատություն և բերրիություն է խորհրդանշում:

Զարդարվեստն ու ոսկերչությունը շարունակում են մնալ հայկական մշակույթի ամենանշանավոր ճյուղերից, և դրա ավանդույթները շարունակում են բազմաթիվ ականավոր վարպետներ:



ԶԱՐԴ

JEWELRY





JEVO

ՄԱՄԻԿՈՆ և ԱՇՈՏ ՄԻՔԱՅԵԼՅԱՆՆԵՐ

MAMIKON & ASHOT MIKAYELYAN

Brothers Mamikon and Ashot Mikayelyans are painters, sculptors and jewelry-makers from Gyumri. They are also twins, locally known as “jevovs,” which they’ve adopted as their brand. JEVO jewelry is made of silver, brass, and copper, incorporating different natural stones. Each piece is entirely unique and handmade by the artists.

Եղբայրներ Մամիկոն և Աշոտ Միքայելյանները գյումրեցի նկարիչ-քանդակագործ և զարդագործ են: Նրանք նաև երկվորյակներ են՝ Գյումրու բարբառով «ջևով», որն էլ դարձրել են իրենց համար ապրանքանիշ: JEVO զարդերը պատրաստվում են արծաթից, արույրից, պղնձից՝ համադրվելով տարբեր բնական քարերի հետ: Բոլոր զարդերը յուրահատուկ են և ձեռակերտ:



+374 98 909 179
mamojev@gmail.com

www.facebook.com/jevossilver | www.instagram.com/jevo_jewellery



You can see Jevo's sculptures and jewelry at their workshops as well as learn how the jewelry pieces are made from sketch to the final work.

Արհեստանոցներում եղբայրներն այցելուներին ցույց են տալիս իրենց քանդակներն ու զարդերը, ինչպես նաև սովորեցնում են, թե ինչպես են պատրաստվում զարդերը՝ էսքիզից մինչև ավարտուն աշխատանք:

Armenian, Russian, German
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

12 G.Nzdeh Str | 1 Charents Str, Apt. 40 - 9. Նժդեհ Փ. 12 | Չարենցի Փ. 1, բն. 40
GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA - ԳՅՈՒՄՐԻ | ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ՂԱՅԱՍԱՆ



Ani Rashoyan is an artist and graduate of the Fine Art Academy of Gyumri. For her Rashani jewelry collections Ani is not limited by materials – she incorporates a wide range of textures into her pieces, including polymer clay, wood, natural stones and even fruit stones. She also collaborates with JEVO, her husband and brother-in-law, to combine metal and polymer for one-of-a-kind statement pieces.

Անի Ռաշոյանը մասնագիտությամբ նկարչուհի է և Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի շրջանավարտ: Rashani զարդերի հավաքածուները պատրաստելիս Անին իրեն չի սահմանափակում՝ կիրառելով նյութերի լայն տեսականի. պղինձերային կավ, փայտ, բնական քարեր և նույնիսկ մրգերի կորիզներ: Նա նաև համագործակցում է JEVO ապրանքանիշի հետ՝ մետաղի և կավի համադրությամբ զարդերի եզակի նմուշներ ստանալու համար:

RASHANI

ԱՆԻ ՌԱՇՈՅԱՆ

ANI RASHOYAN



+374 94 890 183
artrashan@gmail.com

www.facebook.com/rashanihandmade
www.instagram.com/rashanihandmade

GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳՅՈՒՄՐԻ | ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ՀԱՅՁԱՍՏԱՆ





KOSHTOYAN

ՅՈՒԼԱԿ ԿՈՇՏՈՅԱՆ

TSOLAK KOSHTOYAN

Tsolak Koshtoyan is a fourth-generation silversmith in Gyumri. He works with 120-year old tools and molds inherited from his grandfather and makes Alexandrapol-era jewelry – bracelets, belts, rings and earrings. Master Tsolak also makes silver and gold-plated “mushurbas”-traditional goblets of Gyumri that make sounds while drinking water from it.

Յուլակ Կոշտոյանը գյումրեցի չորրորդ սերնդի արծաթագործ է: Նա աշխատում է իր պապից ժառանգած 120-ամյա գործիքներով և կաղապարներով՝ պատրաստելով ալեքսանդրապոլյան ժամանակշրջանի հայտնի զարդեր՝ գոտիներ, թևնոցներ, մատանիներ և ականջօղեր: Վարպետ Յուլակը նաև պատրաստում է արծաթե և ոսկեջրված մուշուրբաներ՝ Գյումրու հանրահայտ բաժակները, որոնք յուրահատուկ ձայն են արձակում ջուր խմելիս:



Koshtoyan

+374 94 476 278
koshtoyan.tsolak@mail.ru

📍 Koshtoyans Jewelry

GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳՅՈՒՄՐԻ | ՇԻՐԱԿԻ ԱՄՐՁ | ՂԱՅԱՍՏԼԱ



Gyumri was a prominent center of silver processing in Armenia up into the 19th century, with products noted for their originality. Today, Artyom Sargsyan carries on this tradition, preserving the traditions of the old generation masters and connecting ancient symbols with contemporary art in his jewelry. No two pieces are the same.

Գյումրին լինելով 19-րդ դարի հայաստանյան արծաթագործության կենտրոնը՝ հատկապես աչքի է ընկել իր ինքնատիպությամբ: Պահպանելով հին սերնդի վարպետների ավանդույթները, ինչպես նաև հնագիտական արժեքները կապելով ժամանակակից արվեստի հետ, Արտյոմ Սարգսյանը ստեղծում է զարդերի բացառիկ նմուշներ: Արվեստագետն ունի իր ինքնատիպ ոճը և, որ ամենակարևորն է, նրա աշխատանքները չունեն իրենց կրկնօրինակները:

ART DESIGN

ԱՐՏՅՈՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ARTYOM SARGSYAN



+374 94 768 789
artartyom78@mail.ru

www.facebook.com/ART.Design.2010.ArtyomSargsyan
www.instagram.com/art_design_jewellery



The studio adjacent to his house Artyom readily welcomes guests and shows them around his workshop.

Իր տան կողքի արհեստանոցում Արտյոմը ուրախությամբ հյուրընկալում և տալիս ցույց է տալիս այցելուներին իր աշխատավայրը:

Armenian, Russian
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

3 Dashtents Str. • Դաշտենց Փ. 3
GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳՅՈՒՄՐԻ | ԺԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ՀԱՅԱՍՏԱՆ



A man with dark hair and a beard, wearing a plaid shirt, is shown in profile, looking intently at a bullet shell pendant he is holding in his hands. The background is a workshop with various tools and equipment. The lighting is dramatic, highlighting the man's face and the details of the pendant.

HAYAR JEWELRY

ԱՐՏԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ARTAK TADEVOSYAN

HayAr Jewelry aims to convey a message of peace in Armenia and through the world through its jewelry. Founded by Artak Tadevosyan, each piece of HayAr Jewelry is made from bullet shells and weapon remains, redirecting the energy of a bullet towards becoming something beautiful. HayAr pendants, earrings, bracelets and rings are all handmade using Tadevosyan's self-made tools.

«HayAr Jewelry»-ն նպատակ ունի իր զարդերի միջոցով խաղաղության ուղերձ հղել Հայաստանին և ամբողջ աշխարհին: Արտակ Թադևոսյանի հիմնադրած «HayAr Jewelry»-ի յուրաքանչյուր զարդ պատրաստված է պարկուճներից և զենքի մնացորդներից՝ ուղղորդելով դրանց էներգիան գեղեցիկի կերտմանը: HayAr-ի կախազարդերը, ականջօղերը, թևնոցներն ու մատանիները ամբողջովին ձեռակերտ են և պատրաստված են Արտակի ինքնաշեն գործիքներով:



+374 77 321 639
arttadevosyan@gmail.com

www.facebook.com/hayar.art
www.instagram.com/hayar_jewelry

GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳԵՌՈՒՄԻ | ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ԲԱՏԱՍՏԱՆ



The designs on Astré natural silk scarves and clay jewelry—symbolizing life and eternity—are inspired by Ughtasar’s petroglyphs and are hand-made in Sisian by painter Zara Gasparyan.

Բնական մետաքսից Astré ձեռագործ շարՖերի և կավե զարդերի դիզայնը կատարում է նկարչուհի Զարա Գասպարյանը՝ ոգեշնչվելով Ուղտասարի ժայռապատկերներից: Նրա գործերի սիմվոլիկան նշանավորում է կյանքը և հավերժությունը:

ASTRÉ ACCESSORIES

ԶԱՐԱ ԳԱՍԴԱՐՅԱՆ
ZARA GASPARYAN



ASTRÉ
accessories

+374 77 554 925
astre.accessories@gmail.com



At their family workshop Zara teaches batik and clay jewelry making techniques.

Իրենց ընտանեկան արհեստանոցում Զարան սովորեցնում է բատիկի և կավե զարդերի պատրաստման տեխնիկան:

Armenian, Russian, English
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

42 G. Lousavorich Str. • Գ. Լուսավորիչի Փ. 42
SISIAN | SYUNIK REGION | ARMENIA • ՍԻՍԻԱՆ | ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ | ՀԱՅՍՏԱՆ





BUDUART

ԱՐՄԱՆ ԲԱԴԵՅԱՆ

ARMAN BADEYAN

Founded in 2008 by professional painters and jewelry makers Arman Badeyan and Margarita Malkhasyan, Buduart is both an artisan brand and a gathering place for artists and art enthusiasts. Arman and Margarita are both graduates of the Academy of Fine Arts in Dilijan. Buduart paintings and jewelry reflect the beauty of Dilijan's forested landscape and swaying pines.

Հիմնադրված լինելով 2008թ-ին պրոֆեսիոնալ նկարիչներ և զարդագործներ Արման Բադեյանի և Մարգարիտա Մալխասյանի կողմից՝ Բուդուարթը ներկայացնում է և արհեստագործական ապրանքանիշ, և արվեստագետների ու արվեստի սիրահարների հավաքատեղի: Արմանն ու Մարգարիտան ավարտել են Գեղարվեստի ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղը: Բուդուարթի նկարներն ու զարդերն արտացոլում են դիլիջանյան անտառների և ճոճվող սոճիների գեղեցկությունը:



BUDUART

STORE

+374 94 270 482
buduart@mail.ru

 Buduart
www.instagram.com/buduar_t



At Buduart art studio in Dilijan you can learn
jewelry making and batik techniques.

Դիլիջանի Բուդուարթ արվեստանոց-ստուդիայում կարող եք
սովորել զարդերի պատրաստման և բատիկի տեխնիկան:

Armenian, Russian, English, French
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

34 Myasnikiyan Str. • Մյասնիկյան Փ. 34
DILIJAN | TAVUSH REGION | ARMENIA • ԴԻԼԻՋԱՆ | ՏԱՎՈՒԹԻ ՄԱՐԶ | ՀԱՅՑԱՍՏԱՆ



Inspired by nature and its geometries, Varazdat Asatryan creates the Bee Art Exclusive jewelry line by combining natural materials like wood, precious stones and metals with his skills of carving and jewelry design. The result is a range of organically shaped and unique rings, earrings and pendants.

Վարազդատ Ասատրյանը՝ ոգեշնչված բնության երկրաչափական դրսևորումներով, գործի է դնում իր փորագրության և ոսկերչական հմտությունները՝ ստեղծելով Bee Art Exclusive զարդերի շարքը: Նրա հավաքածուների մեջ զուգորդվում են այնպիսի բնական նյութեր, ինչպիսիք են փայտը, թանկարժեք քարերն ու մետաղները: Արդյունքը՝ համահունչ համադրված յուրօրինակ մատանիներն, օղերն ու կախազարդերն են:

BEE ART EXCLUSIVE

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՍԱՏՐՅԱՆ
VARAZDAT ASATRYAN




Bee Art
EXCLUSIVE

+374 94 519 620
beeartexclusive@gmail.com

www.facebook.com/beeartexclusive.page
www.instagram.com/beeartexclusive

RIND | VAYOTS DZOR REGION | ARMENIA · ՌԻՆԴ | ՎԱՅՈՏԵ ԶՈՐԻ ՄԱՐԶ | ԴԱՅԱՍՏԱՆ





DANDELION HANDMADE

ՌԻՄԱ ԳՅՈՂԱԿՅԱՆ

RIMA GYODAKYAN

Dandelion Handmade, an artistic brand created by painter Rima Gyodakyan, includes a collection of natural stone jewelry and ornaments made with papier mâché technique. Each of Dandelion's ornaments are unique, conveying the message of love, humor, kindness and, most importantly, the Christmas mood.

Նկարիչ Ռիմա Գյողակյանի հիմնած «Dandelion Handmade» ապրանքանիշը ներկայացնում է բնական քարերից զարդերի և պապյե մաշե տեխնիկայով պատրաստված տոնական զարդարանքների հավաքածուներ: «Dandelion» ապրանքանիշի բացառիկ զարդերն ու զարդարանքները ստեղծում են սիրո, հումորի, բարության և, որ ամենակարևորն է, ամանորյա տրամադրություն:



+374 94 688 081
gyodakyanrima@mail.ru

www.facebook.com/dandelionarthandmade
www.instagram.com/dandelionart_handmade

GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳԵՈՒՆՐԻ | ԵՐԻՎԱՆԻ ՄԱՐԶ | ՀԱՅՍՏԱՆ



ԿԱՎ | CLAY

Pottery is one of the oldest Armenian traditions, dating back to the third millennia BCE. Large vessels to carry water, preserve foods and store wine were found in the ruins of ancient dwellings, often with etchings of deer, fish, trees, the sun, and mythological creatures like dragons and serpents.

Both women and men were engaged in ceramic work - women mainly household items, and men practicing pottery on wheel. This is another tradition passed through generations in Armenian families.

Խեցեգործությունը հայկական հնագույն ավանդույթներից է, որը թվագրվում է է մ.թ.ա. 3-րդ հազարամյակին: Հնագույն բնակավայրերի պեղումների ժամանակ հայտնաբերվել են ջրի, սննդի և գինու խոշոր անոթներ, որոնց վրա հաճախ հանդիպում են եղևիկների, ձկների, ծառերի, արևի և առասպելական արարածների՝ վիշապների և օձերի զարդանախշեր:

Տնային կավագործությունը բացառապես կանանց գործն էր, իսկ բրոտագործությունը՝ տղամարդկանց: Այս հմտությունը նույնպես ավանդաբար փոխանցվել է ընտանիքի ներսում, սերնդեսերունդ:



404
CLAY



A portrait of Gohar Petrosyan, a young woman with dark, curly hair, wearing a pink and white checkered short-sleeved shirt. She is sitting in a wooden chair, looking directly at the camera with a slight smile. The background is a rustic interior with a large, textured wall hanging made of dried plants and twigs.

GOHAR

ԳՈՐԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

GOHAR PETROSYAN

Upon graduating from the State Academy of Fine Art, artist Gohar Petrosyan began to experiment with sculptures and clay, mixing painting and sculpting. Today she makes unique paintings and ceramic statuettes with Armenian designs at her home workshop at Hatsik village. Gohar also is a teacher and transfers her knowledge to young children of the village.

Գեղարվեստի պետական ակադեմիան ավարտելուց հետո նկարիչ Գոհար Պետրոսյանը սկսեց փորձեր կատարել քանդակներով և կավով՝ միաձուլելով քանդակագործության և նկարչական իր հմտությունները: Այսօր չափի գյուղի իր տանը կից արվեստանոցում Գոհարը ստեղծում է յուրահատուկ նկարներ և կավե արձանիկներ՝ հայկական զարդանախշերով: Նա նաև ուսուցիչ է և փոխանցում է իր գիտելիքները գյուղի երեխաներին:



G O H A R

+374 94 571 904
petrosyango3@gmail.com

www.facebook.com/P6og5
www.instagram.com/gohar.petrosyan1



At the workshop adjacent to her house in Hatsik Gohar teaches ceramics and painting to kids and to visitors alike.

Հացիկոմ իր տանը հարակից արհեստանոցում, Գոհարը երեխաներին և այցելուներին սովորեցնում է կավագործություն և նկարչություն:

Armenian, Russian
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

5th Str., 3rd lane, 1 house • 5րդ Փ., 3րդ նրբ., տուն 1
HATSIK | SHIRAK REGION | ARMENIA • ՀԱՅԻԿ | ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ՀԱՅԱՍՏԱՆ



While Gyumri is known as a city of crafts, it did not have a rich historical tradition of pottery, which was more popular as a household craft in rural areas. Clay vessels were used to store food such as cheese or butter. Today Vazgen Gevorgyan works to revive pottery traditions, making clay jars, pots, cups and items inspired by archeological find from the region.

Չնայած Գյումրին համարվում է արհեստների քաղաք, սակայն այն հարուստ չէ կավագործական ավանդույթներով, որն ավելի տարածված է եղել գյուղական համայնքներում: Այստեղ կավե տարաները օգտագործվել են սնունդ՝ պանիր, կարագ, պահեստավորելու համար: Ներկայումս Վազգենը վերականգնում է կավագործության ավանդույթը՝ կերտելով կուժեր, բաժակներ, սափորներ և տարաներ՝ ոգեշնչվելով տարածաշրջանի հնագիտական գտածոներով:

GEVORGYAN CERAMICS

ՎԱԶԳԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
VAZGEN GEVORGYAN



+374 93 673 916
gevorgyanvazgen6@gmail.com




You can visit Vazgen at his workshop, try pottery making and painting, taking the finished work with you.

Կարող եք այցելել Վազգենին իր արհեստանոցում, փորձեք աշխատել բրուտի հետ և սովորեք նկարել պատրաստի խեցեղենի վրա՝ վերջում ձեզ հետ վերցնելով ստացված աշխատանքները:

Armenian, Russian
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

31 Yerkatgtsi Str. • Երկաթգծի Փ. 31
GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳՅՈՒՄՐԻ | ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ՀԱՅԱՍՏԱՆ



A close-up photograph of a man, identified as Levon Hovhannisyán, working on a ceramic piece. He is shown in profile, focused on his craft. The workshop is dimly lit, with a strong light source from the left creating a warm, golden glow and lens flare effects. The background is filled with various pottery-related items, including shelves and other ceramic pieces, though they are out of focus. The man is wearing a dark red shirt. The overall atmosphere is one of traditional craftsmanship and artistic dedication.

LEO CERAMICS

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

LEVON HOVHANNISYAN

Potter Levon Hovhannisyán creates items that recall traditional forms, while adding contemporary accents through colorful glazes. Several years ago he opened a workshop adjacent to his home. At Leo Ceramics he hosts tourists and visitors, providing master classes, demonstrations, and a shop.

Խեցեգործ Լևոն Հովհաննիսյանը ստեղծում է ավանդական ոճով կիրառական ապրանքներ, ինչպես նաև դրանց հաղորդում է ժամանակակից շունչ՝ պատելով գունազեղ ջնարակով: Մի քանի տարի առաջ իր տան հարակից տարածքում նա բացել է խեցեգործական արհեստանոց: Leo Ceramics-ում Լևոնը հյուրընկալում է այցելուներին, իրականացնում ցուցադրություն և վարպետաց դասեր:



LEVO
CERAMICS

+374 77 636 500
levon.hovhannisyanyan85@mail.ru



At his home-workshop Levon teaches the theory and practice of potter's wheel.
The finished work can later be shipped to the author.

Իր տանը կից արհեստանոցում Լևոնն այցելուներին սովորեցնում է, թե
ինչ է բրտատակիվը և ինչպես աշխատել դրա վրա: Պատրաստի աշխատանքները
կարող են այնուհետ առաքվել հեղինակին:

Armenian, Russian
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

87 Meqenavarnar Str. • Մեքենավարների Փ. 87
GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳՅՈՒՄՐԻ | ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ՀԱՅԱՍՏԱՆ



To help build Gyumri's emerging and vibrant art scene, painters Mamikon and Karlen Varderesyans established "Arevstanots" (Art studio in Armenian), a makerspace where local youth gather to work and discuss art and craft. Mamikon's hobby of keeping different types of birds and parrots adds to the creativity of Arevstanots.

Գյումրիում արվեստի զարգացման և աշխուժացման նպատակով նկարիչներ Մամիկոն և Կարլեն Վարդերեսյանները հիմնեցին «Արվեստանոցը», ստեղծագործելու տարածք, որտեղ ստեղացի երիտասարդները հավաքվում են արարելու, և քննարկումներ կազմակերպում արհեստի ու արվեստի մասին: Այստեղ Մամիկոնը նաև տարբեր թռչուններ և թութակներ է պահում, ինչն ավելացնում է «Արվեստանոցի» ստեղծագործականությունը:

ARVESTANOTS

ՄԱՍԻԿՈՆ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ
MAMIKON VARDERESYAN



+374 94 833 994
mvarderesyan91@gmail.com

www.facebook.com/arvestanots
www.instagram.com/arvestanotsartstudio

GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳԳՈՒՄՐԻ | ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ՂԱՅԱՍՏԱՆ



A man with dark hair, wearing a red t-shirt, is focused on shaping a piece of clay on a pottery wheel. He is in a workshop setting with a stone wall in the background. The lighting is warm and natural, highlighting the texture of the clay and the man's concentration.

SISIAN CERAMICS

ՎԱՀԱԳՆ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

VAHAGN HAMBARDZUMYAN

Sisian Ceramics was founded by ceramic-artist Vahagn Hambardzumyan and his wife, painter Zara Gasparyan, who work together to help develop and sustain Armenia's cultural heritage—especially ceramics—in the southern part of Armenia. Sisian Ceramics studies the roots of Armenian ceramics, ancient technologies, and decorative art forms while developing local capacity in ceramics and promoting local tourism development in Sisian.

«Սիսիան կերամիքսը» հիմնադրել են կավագործ վարպետ Վահագն Համբարձումյանը և նրա կինը՝ նկարչուհի Զարա Գասպարյանը: Այսօր նրանք աշխատում են միասին Հայաստանի հարավում՝ զարգացնելով և պահպանելով կավագործության հայկական մշակութային ժառանգությունը: «Սիսիան կերամիքսը» ուսումնասիրում է հայ խեցեգործության արմատները, հնագույն տեխնոլոգիաները և դեկորատիվ արվեստի տեսակները՝ մրննույն ժամանակ զարգացնելով հաջորդ սերնդների խեցեգործական հմտությունները և խթանելով Սիսիանում տուրիզմի զարգացումը:



SISIAN CERAMICS

+374 93 615 661
armeniavahagn@gmail.com

www.facebook.com/SisianCeramics | www.instagram.com/sisianceramics
www.sisianceramics.am



At Sisian Ceramics Vahagn teaches visitors pottery with wheel throwing technique.

Սիսիան Կերամիքսում Վահագնը այցելումներին բրոտազործություն է սովորեցնում:

Armenian, Russian, English
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

42 G. Lousavorich Str. • Գ. Լուսավորիչի Փ. 42
SISIAN | SYUNIK REGION | ARMENIA • ՄԻՍԻԱՆ | ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ | ՀԱՅԱՍՏԱՆ



ԿԱՐՊԵՏ | CARPET

Carpet making was one of the ancestral occupations among women in Armenia who passed their skills to young girls. Carpet making was exclusively women's craft. In the nineteenth century, Armenian women commonly practiced rug weaving—seen as pious work—especially in the villages, where every home contained a weaving loom. Rugs and carpets involve different weaving techniques, but could be woven on the same loom. Handmade carpets and rugs were an important element in the interior design of traditional houses which were used to decorate floors, walls and to separate rooms.

Armenian rugs are decorated with various motifs. One of the most characteristic of the earliest surviving rugs is the vishapagorg (dragon-rug), a design traced back to the fifteenth century, which later developed into distinctive regional styles and is still popular among modern weavers.

Գորգագործությունն ընտանեկան արհեստներից էր, որով գլխավորապես զբաղվում էին կանայք՝ միաժամանակ իրենց հստությունը փոխանցելով աղջիկներին: Կարելի է ասել՝ այն բացառապես կնոջ արհեստ է եղել: Վերջինս համարվում էր բարեպաշտ արհեստ, հատկապես գյուղերում, որտեղ յուրաքանչյուր տուն իր տորթն ուներ: Գորգերն ու կարպետները գործվածքների տարբեր տեխնիկաներ են պահանջում, սակայն կարող են հյուսվել նույն տորթի վրա:

Ձեռագործ գորգերն ու կարպետներն ավանդական բնակարանի ներքին հարդարման կարևոր տարրերից են եղել, զարդարել են հատակն ու պատերը, գործածվել են որպես սենյակները կիսող վարագույր, ծածկոց, փոռոց և այլն:

Նայկական գորգերն իրենց զարդանախշային մոտիվներով բազմաբնույթ են: Մեզ հասած հնագույն գորգերից ամենահայտնիներից մեկը վիշապագորգն է, որը թվագրվում է տասնհինգերորդ դարին՝ դառնալով յուրահատուկ տարածաշրջանային ոճ և դեռևս օգտագործվում է ժամանակակից գորգագործների շրջանակներում:



ԿԱՐՊԵՏ
CARPET





Wool to Carpet is one of the Goris Women's Development Resource Center Foundation's social entrepreneurship projects implemented in Shinuhayr village of Syunik region. 43 women from the village are involved in wool and yarn production, carpet weaving and creation of home products and personal accessories. Using the range of colors naturally produced in sheep's wool the team revives old traditional Armenian designs and ornaments.

«Բրդից կարպետ»-ը Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի սոցիալական նախաձեռնություններից մեկն է, որն իրականացվում է Սյունիքի մարզի Շինուհայր համայնքում: Տեղի 43 կանայք ներգրավված են բրդի և թելի մշակման, կարպետագործության և բրդյա արքեսուարների ու տան պարագաների ստեղծման աշխատանքներում: Օգտագործելով բրդի բնական երանգները՝ կանանց խումբը վերականգնում է հին հայկական նաշխերն ու նմուշները:

WOOL TO CARPET

ՌՈՒԶԱՆՆԱ ԹՈՌՈԶՅԱՆ

RUZANNA TOROZYAN



+374 77 060 699
goriswomen@gmail.com

www.facebook.com/wooltocarpet



You can book a tour at Shinuhayr Center to learn the entire process of the traditional wool making – from sheep shearing to carpet making.

Ճինուհայրի կենտրոնում կարող եք տեսնել բրդից կարպետ ստանալու ողջ գործընթացը՝ ոչխարի խուզումից մինչև կարպետի հյուսք:

Armenian, English

Tue-Sat, 10am-6pm | երբ-ճերթ, 10:00-18:00

Book 24-72 hours in advance | Ամրագրել 24-72 ժամ առաջ

Shinuhayr Highway • Ճինուհայրի մայրուղի

SHINUHAYR | SYUNIK REGION | ARMENIA • ՃԻՆՈՒԴԱՅԻՐ | ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ | ԳԱՅԱՍՏԱՆ



ՇԻԲՈՒԿԻՇԿՅԱՆՍ

ԱՆՈՒՅ և ԴՈՆԱՐԱ ԶԻՐՈՒԽԶՅԱՆՆԵՐ

ANUSH & DONARA CHIBUKHCHYAN

Cousins Anush and Donara graduated the Applied Art department of State University branch in Ijevan, where they both became faculty in 2000, teaching design, painting, carpet weaving and other skills to the next generation. In 2010, Anush and Donara became honorable members of Artists' Union of Armenia. With the purpose of promoting Armenian culture in the world, their brand Chibukhchyan's creates functional and unique products for the home using their carpet making and painting skills.


Զարմուհիներ Անուշը և Դոնարան ավարտել են պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կիրառական արվեստի բաժինը: Նույն համալսարանում էլ 2000 թվականից սկսած նրանք դասախոսում են՝ հաջորդող սերնդին սովորեցնելով դիզայն, նկարչություն, գորգագործություն և այլ հմտություններ: 2010-ից Անուշը և Դոնարան Հայաստանի նկարիչների միության պատվավոր անդամներ են: Հայկական մշակույթը ամբողջ աշխարհում ներակայացնելու նպատակով իրենց ապրանքանիշի՝ Chibukhchyan's-ի ներքո, նրանք ստեղծում են կիրառական և յուրահատուկ ապրանքներ տան համար՝ օգտագործելով իրենց գորգագործական և նկարչական հմտությունները:



ART STUDIO
Chibukhchyan's

+374 93 934 263 | +374 77 776 232

anush.chibukhchyan@inbox.ru
donara.chibukhchyan@mail.ru



Sona Makaryan is a carpet and rug weaving master from Khachik village. She is one of the few people who knows the whole process of handmade carpet production. Sona has learned these skills from her grandmother and mother, which is how traditionally it was transferred through generations. By teaching the women and children in her own and neighboring communities, Sona ensures that these traditions survive.

Սոնա Մակարյանը կարպետագործ և գորգագործ վարպետ է Խաչիկ գյուղից: Նա այն քչերից է, ով տիրապետում է մանածագործության և գորգագործության բոլոր փուլերին: Սոնան այս հմտությունները սովորել է իր տատիկից և մայրիկից, ինչը ձեռագործ հմտությունների՝ սերնդեսերունդ փոխանցման ավանդական ձևն է եղել: Այսօր Սոնան ջանում է պահպանել այս ավանդական արհեստը՝ դասավանդելով տեղի և հարևան համայնքների կանանց ու երեխաներին:

SONA MAKARIAN

ՍՈՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ
SONA MAKARIAN

 **Sona Makarian**
Carpet weaver

+374 93 837 526
sona58@bk.ru

KHACHIK | WAYOTS DZOR REGION | ARMENIA • հԱԳԻԿ | ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶ | ՂԱՅԱՍԱՆ





ԳՈՐԾՎԱԾՔ | NEEDLEWORK

The nineteenth-century Armenian home featured an abundance of laces and embroidered textiles, especially during weddings and feasts, when families displayed their finest. Needlework was one of few forms of expression open to women in a society where they were largely without rights or prestige. It provided a “voice”: stitches, instead of words, became a language.

It also provided subsistence in hard times; women could sell their needlework for income, calling it “bread of the black days.”

Տասնիններորդ դարի հայկական տանը բնորոշ էին բազում գործվածքներ՝ ժանյակներ և ասեղնագործ պարագաներ, որոնք հատկապես աչքի էին ընկնում հարսանիքների և տոների ժամանակ, երբ ընտանիքները ցուցադրում էին իրենց լավագույն ունեցվածքը: Գործվածքի ստեղծումը հասարակության մեջ կանանց համար արտահայտման քիչ ձևերից մեկն էր, քանի որ նրանք հիմնականում չունեին իրավունքներ կամ ազդեցություն: Գործվածքը «ձայն» հաղորդեց նրանց. բառերին փոխարինեցին «հանգուցները»:

Այս ձեռագործ հմտությունները նաև կայունություն ապահովեցին ծանր ժամանակներում՝ կանայք կարող էին վաճառել իրենց աշխատանքը, դրանք անվանելով «սև օրվա հաց»:



ՉՈՐԾՎԱԾՔ
NEEDLEWORK





ԱՆԺԵԼԻԿԱ ԶԱՂԻՆՅԱՆ

ANZHELIKA JAGHINYAN

Painter, embroiderer and artist Anzhelika Jaghinyan is also a teacher at the National Center for Aesthetic after Henrik Igityan in Vanadzor. Her creativity in blending embroidery techniques and using unique colors shines through the students' work.

Նկարչուհի, ասեղնագործող և արվեստագետ Անժելիկա Զաղինյանը նաև դասավանդում է շենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղում: Նրա ստեղծագործ միտքը և ասեղնագործության տեխնիկան յուրահատուկ գույների հետ համադրելու կարողությունները վառ արտահայտվում են նաև նրա աշակերտների աշխատանքներում:



+374 77 677 989
gakvm84@mail.ru



Together with her team Anzhelika teaches delicate needlework, carpet making and batik painting at her art-studio.

Իր թիմի հետ միասին Անժելիկան այցելումներին սովորեցնում է ասեղնագործություն, կարպետագործություն և բատիկի տեխնոլոգիայով նկարչություն:

Armenian, Russian, English, Spanish
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

19a Myasnikyan Str. • Մյասնիկյան 19ա
VANADZOR | LORI REGION | ARMENIA • ՎԱՆԱԶՈՐ | ԼՈՐԻ ՄԱՐԶ | ՀԱՅԱՍՏԱՆ



When Hayarpi and her husband Artak could not find a job in their hometown Gyumri, they were faced with the choice of staying in Armenia or migrating. To help the family, Hayarpi drew on her skills of crochet and started to make children's toys and dolls. Today at HayAr Crochet one can find funny characters of toys as well as handmade bags.

Երբ Հայարփին և իր ամուսինը՝ Արտակը, չէին կարողանում աշխատանք գտնել իրենց հայրենի քաղաք Գյումրիում, նրանք կանգնեցին Հայաստանում մնալու կամ արտագաղթելու ընտրության առջև: Ընտանիքին օգնելու համար Հայարփին գործի դրեց հելոնագործության իր հմտությունները՝ երեխաների համար պատրաստելով տիկնիկներ և խաղալիքներ: Այսօր արդեն «HayAr Crochet»-ում կարելի է գտնել ինչպես հետաքրքրաշարժ կերպարներով խաղալիքներ, այնպես էլ ձեռագործ պայուսակներ:

HAYAR CROCHET

ՀԱՅԱՐՓԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ-ԹԱԴԵՎՍՅԱՆ
HAYARPI GEVORGYAN-TADEVOSYAN



+374 77 888 771
hayarpi.gevorgyan1990@gmail.com

GYUMRI | SHIRAK REGION | ARMENIA • ԳՅՈՒՄՐԻ | ԾԻՐԱԿԻ ՄԱՐԶ | ՀԱՅՁԱՍՏԱՆ





MANUSHAK

ՄԱՆՈՒՇԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

MANUSHAK NERSISYAN

Manushak Nersisyan learned to knit and crochet from her mother and grandmother. Living in a far northern village of Armenia known for cold winters, and where unemployment is a major issue, Manushak gathered several women together to create hats, sweaters, mittens and scarves, which they could both use and sell for their household income.

Մանուշակ Ներսիսյանը շյուղագործություն և հելունագործություն սովորել է իր մայրիկից և տատիկից: Ապրելով չայաստանի հեռավոր հյուսիսային գյուղերից մեկում, որը հայտնի է ցրտաշունչ ձմեռներով, և որտեղ գործազրկությունը մեծ խնդիր է, Մանուշակը միավորել է մի քանի կանանց՝ գլխարկների, սվիտերերի, ձեռնոցների և շարՖերի պատրաստման գաղափարի շուրջ, որոնք նրանք կարող են թե՛ անձամբ օգտագործել, և թե՛ վաճառել եկամտի համար:



+374 93 863 381
nersisyan.manushak@mail.ru



Goris Crochet is one of the Goris Women's Development Resource Center Foundation's social projects, providing jobs for unemployed women in the region. The women produce crocheted animals, dolls, fruits and vegetables. All Goris Crochet products are individually handcrafted and made from 100% natural materials, which are safe for children.

Գորիս Քրոշեն Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի սոցիալական նախաձեռնություններից մեկն է, որը զբաղվածություն է ապահովում համայնքների տնտեսապես անապահով կանանց համար: Կանայք այստեղ պատրաստում են հելունագործ կենդանիներ, տիկնիկներ, միրգ և բանջարեղեն: Գորիս Քրոշեի բոլոր աշխատանքները ձեռագործ են, պատրաստված են 100% բնական հումքից և ապահով են երեխաների համար:

GORIS CROCHET

ՆՈՒՆԵ ԱՂԱԹԵԼՅԱՆ
NUNE AGHATELYAN



+374 77 075 288
goriswomen@gmail.com

www.facebook.com/gorishandmade




You can visit the Crochet center when in Goris to see how Nune and her team crochet colorful animals and take one as a souvenir.

Այցելեք Նունեին և իր թիմին Գորիսում՝ ծանոթանալու, թե ինչպես են ստեղծվում գույնզգույն կենդանիները և տարեք մեկին ձեզ հետ տուն:

Armenian, Russian
Book 24 hours in advance | Ամրագրել 24 ժամ առաջ

7/14 Ankakhutyan Str. • Անկախության Փ. 7/14
GORIS | SYUNIK REGION | ARMENIA • ԳՈՐԻՍ | ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ | ՀԱՅԱՍՏԱՆ





MARVEL HANDMADE

ՄԱՐԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ

MARINE KHACHIKYAN

Crochet artist and Armenian literature teacher Marine Khachikyan is known for her creativity. Marine lives in Koti, a village on the border between Armenia and Azerbaijan. While many people leave Koti to seek out jobs in Yerevan, Marine chooses to remain in the village to provide others with a model for how they too can use creativity to build a livelihood without leaving their home. Marine's collections feature custom-made dolls, very tiny crocheted animals, and kids' backpacks with crocheted details.

Հայ գրականության ուսուցչուհի և հեղինակուհի Մարինե Խաչիկյանը հայտնի է իր ստեղծագործական տաղանդով: Մարինեն Տավուշի մարզի սահմանամերձ Կոթի համայնքից է: Մինչ շատերը մեկնում են գյուղից՝ աշխատանք փնտրելով Երևանում, Մարինեն նախընտրում է մնալ Կոթիում և իր օրինակով ցույց տալ, թե ինչպես ստեղծագործականությունը կարելի է վերածել ապրուստի միջոցի: Մարինեի աշխատանքների հավաքածուն ներառում է ըստ պատվերի պատրաստված տիկնիկներ, մանրակերտ հեղինակուհի խաղալիքներ և երեխաների ուսապարկեր՝ հեղինակործ արքեսուարներով:



+374 93 864 615
khachikyan92@mail.ru

www.facebook.com/marvelhandmade

KOTI | TAVUSH REGION | ARMENIA • ԿՈՒԹԻ | ՏԱՎՈՒԹԻ ՄԱՐԶ | ՀԱՅՅԱՍՏԱՆ



Painter Nona is self-taught in crochet. Inspired by the ideas of creating colorful toys for children, she created her brand GSG. GSG colorful toys recall well-known Armenian tales. Children can also collect different characters and create their own stories.

Նկարչուհի Նոնան ինքնուսու հելլունագործ է: Ոգեշնչվելով երեխաների համար գունազարդ խաղալիքներ ստեղծելու գաղափարից՝ նա հիմնեց GSG ապրանքանիշը: GSG գույնզգույն խաղալիքները ներառում են հանրահայտ հայկական հեքիաթների կերպարներ: Երեխաները կարող են նաև հավաքել տարբեր կերպարներ և ստեղծել իրենց սեփական պատմվածքները:

GSG

ՆՈՆԱ ՄԱՐԴԱՆՅԱՆ
NONA MARDANYAN



GSG

+374 98 995 572
gsg.mardanyan@gmail.com

DILIJAN | TAVUSH REGION | ARMENIA • ԴԻԼԻՋԱՆ | ՏԱՎՈՒՅԻ ՄԱՐԶ | ԴԱՅՁԱՍՏԱՆ





ARMELYAN

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՅԱՆ

ARMINE MELYAN

Armine learned crochet by examining books and magazines, and began making scarves, sweaters, hats and more. With these skills, she eventually began to make toys, putting character into each and every doll she creates. Today Armine owns a small yarn store in Dilijan and passes her crochet skills to the next generation by teaching at Dilijan Art School and different social-educational centers.

Հելոնա գործությունն Արմինեն սովորել է՝ ուսումնասիրելով գրքեր և ամսագրեր, զուգահեռ գործել է շարՖեր, սվիտերեր, գլխարկներ և այլն: Զարգացնելով իր հմտությունները՝ նա սկսել է պատրաստել յուրահատուկ կերպարներով խաղալիքներ: Այսօր Արմինեն ունի թելերի փոքրիկ խանութ Դիլիջանում և փոխանցում է իր հելոնագործական հմտությունները հաջորդ սերնդներին Դիլիջանի արվեստի դպրոցում և սոցիալ-կրթական հաստատություններում:



armelyan
CROCHET

+374 94 253 955
armelyan@mail.ru

DILIJAN | TAVUSH REGION | ARMENIA • ԴԻԼԻՋԱՆ | ՏԱՎՈՒԹԻ ՄԱՐԶ | ՀԱՅՍՏԱՆ



Armine Poghosyan learned lace-making at the Dilijan Children's Art School, where she has been teaching the craft to students since 1998. Her love and passion for handicraft also derive from her mother, who taught her embroidery. The creation of beautiful lace requires patience, consistency, flexibility, imagination, sense of symmetry and size.

Արմինե Պողոսյանը ժանեկագործությունը սովորել է Դիլիջանի գեղարվեստի մանկական դպրոցում, որտեղ էլ դասավանդում է այս արվեստը 1998 թվից սկսած: Նրա սերը ձեռագործ աշխատանքների հանդեպ եկել է նաև մորից, ով նրան ասեղնագործություն է սովորեցրել: Գեղեցիկ ժանյակ ասեղնագործելու համար հարկավոր է համբերություն, ճկունություն, վառ երևակայություն, սիմետրիայի և չափի զգացողություն:


INE

ԱՐՄԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ
